ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ և ԴՊՐՈՑ_ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ուսուցիչը պետք է.

1. Քարոզի ընտանեկան արժեքները, հումանիստական մանկավարժության, առողջ ապրելակերպի գաղափարները, երեխաների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքը:
2. Նպաստի ընտանիքի , ծնողների հեղինակության և վարկի ամրապնդմանն ու բարձրացմանը, ընտանիքի անդամների միջև փոխադարձ հարգանքի հաստատմանը, դաստիարակության գործում ծնողների ակտիվության բարձրացմանը:
3. Լինի մանկության և երեխաների իրավունքների պաշտպանը, նրանց ֆիզիոլոգիական և հոգեկան անվտանգությունն ապահովողը:
4. Վստահի և հավատա ծնողների դաստիարակչական հնարավորություններին:
5. Ապահովի երեխայի նկատմամբ **միասնական պահանջների** և բոլոր իրավիճակներում **ընտանիքի ու դպրոցի գործողությունների համապատասխանեցման** սկզբունքների իրականացումը ընտանիքում և դպրոցում :
6. Կոնկրետ քայլեր ձեռնարկի ծնողների մանկավարժական կուլտուրայի, հոգեբանա-առողջապահպանական, իրավական գիտելիքների բարձրացման ուղղությամբ:
7. Դրսևորի մանկավարժական տակտ՝ երեխաների հետ կապված խնդիրները ծնողներին ներկայացնելիս և նրբանկատություն՝ բացառելով ընտանեկան կյանքին խառնվելը կամ միջամտելը:
8. Բոլոր իրավիճակներում ցուցաբերի մանկավարժական աջակցություն՝ երեխաներին և ծնողներին:

9. Տիրապետի ծնողների հետ համագործակցության տարբեր ձևերին /անհատական և կոլեկտիվ /և ունենա դրանց արդյունավետ կիրառման հմտություններ:
10. Բացահայտի ընտանիքի առանձնահատկությունները ,նպատակները, արժեքային կոմնորոշումները:Դառնա ընտանիքի ցանկալի հյուրը և գործընկերը, գովազդի,գովի այն ընտանիքներին, որտեղ ծնողները գիտակցում են դաստիարակության նպատակն ու իրենց դերը և լուծված են ապահով մանկության հարցերը :
11. Օգնի ծնողներին ձեռք բերելու երեխային ճանաչելու և նրա կարիքները բացահայտելու, երեխայի գործունեությունը մշտապես վերահսկելու, ընտանեկան դաստիարակության ինքնախտորոշում և ինքնավերլուծություն իրականացնելու հմտություններ:
12. Քարոզի ընտանեկան համատեղ հանգիստն ու աշխատանքը:
13. Իր ողջ գործունեությամբ նպաստի դպրոցական և ընտանեկան դաստիարակչական գործընթացների ինտեգրմանը և դաստիարակչական միասնական միջավայրի ստեղծմանը:
14. Ծանոթացնի ծնողներին դասարանի, դպրոցի հոգսերին, կարիքներին, ընդգրկի նրանց արտադասարանական-արտադպրոցական աշխատանքների կազմակերպմանը, մասնակից դարձնի դպրոցի հարդարման, զարգացման ծրագրերի մշակմանը:
15. Ծնողների հետ համագործակցելով նպաստի երեխաների ազատությանը, ինքնուրույնությանը, ակտիվ գործունեությանը, պատասխանատվության, նախաձեռնողականության, ստեղծագործականության զարգացմանը :
16. Ունենա մասնագիտական որակավորման, մանկավարժական մշակույթի մշտական բարձրացման անհրաժեշտության գիտակցություն և դրսևորման հմտություններ :